ՂԱՐԱԲԱՂԸ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

(1917 թ. մարտ - 1918 թ. օգոստոս)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Լ. Է.

Առաջին համաշխարհային պատերազմը դեռ շարունակվում էր, ռուսական հաղթական բանակը գրավել էր Թուրքիայի արևելյան նահանգները՝ բուն Արևմտյան Հայաստանը, երբ 1917 թ. փետրվարի 27-ին Ռուսական կայսրության մայրաքաղաքում տապալվեց միապետական ռեժիմը, և հաստատվեցին բուրժուա-դեմոկրատական կարգեր: Կառավարելու համար ստեղծվեց մի մարմին, որը կոչվեց Ժամանակավոր կառավարություն և պետք է գործեր մինչև օրինական ժողովրդավար ընտրությունների միջոցով նոր կառավարություն կազմելը:

Անդրկովկասում հեղափոխության լուրը ընդունվեց խանդավառությամբ: Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում որոշ վարչական փոփոխություններ մտցրեց: Նախ, Հյուսիսային Կովկասն անջատեց Անդրկովկասից: Վերջինս կառավարելու համար կազմեց մի վարչություն՝ բաղկացած Անդրկովկասի երեք ժողովուրդների ներկայացուցիչներից ու ռուսներից, անվանելով այն Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ռուս.՝ Отдельный Закавказский комитет)՝ առավելապես հայտնի Օզակոմ անունով: Եվ ապա պատերազմի իրավունքով գրավված տարածքները անջատեց Անդրկովկասից, ստեղծեց մի առանձին վարչատարածքային միավոր՝ այն դնելով կենտրոնի տնօրինության տակ՝ հուրախություն հայ ժողովրդի:

Փետրվարյան հեղափոխության վերաբերյալ կարծիք կար, որ այն հաղթանակեց ոչ թե հեղափոխական զանգվածների ուժի, կազմակերպվածության շնորհիվ, այլ միապետական կարգերի նեխվածության, տկարության պատճառով[1]: Եվ հիրավի, իրադարձությունների հետագա ընթացքը հաստատեց այդ կարծիքի ճշմարտությունը:

Օզակոմը ողջ Անդրկովկասում ստեղծեց տեղական ինքնակառավարման մարմիններ՝ գործադիր կոմիտեներ: Համաձայն Օզակոմի հրահանգի, 1919 թ. մարտի 12 -ին Շուշիում տեղի ունեցան գործադիր կոմիտեի ընտրություններ: Ընտրվեց 40 պատգամավոր, որոնք իրենց հերթին ընտրեցին 8-հոգանոց վարչություն[2]:

Հեղափոխության ընձեռած ժողովրդավարական ազատությունների շնորհիվ հասարակական կյանքը Շուշիում բավական աշխուժացավ: Սկսեցին գործել կուսակցություններ, կուսակցության անվան տակ՝ տարբեր քաղաքական խմբակներ[3]: Դեպքերի ականատես, հաճախ նաև՝ մասնակից Ա. Կիսիբեկյանը իր հուշագրության էջերում ներկայացնում է

---

[1] **Վրացյան Ս.,** Կյանքի ուղիներով. Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Դ, Պեյրութ, 1965, էջ 23:
[2] Մշակ, 30.III.1917:
[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 314, ց. 1, գ. 111, թ. 3, գ. 34, թ. 41-42:

Շուշիում և գավառում գործող կուսակցությունների ու խմբակների պատկերը:

1. Էսեռներ. խմբակը բաղկացած էր 5 - 6 հոգուց:

2. Կադետներ. հայ և թուրք բուրժուազիայի ներկայացուցիչներ էին և ակտիվանում էին հատկապես ընտրությունների ժամանակ, փողով հասնում որոշ հաջողությունների, ունեին "Шушинский листок" թերթը:

3. Սոցիալ-դեմոկրատներ. գործում էին միայն Շուշիում, հիմնականում մտավորականներ էին, ունեին «Փայլակ» անունով թերթ: Սոցիալ-դեմոկրատները 1917 թ. տրոհվեցին բոլշևիկների և մենշևիկների: Բոլշևիկներն ունեին «Նեցուկ» անունով թերթ (խմբագիր՝ Ա. Հովհաննիսյան)[4]:

4. Հայ հեղափոխական դաշնակցություն. ամենահին, ամենաբազմամարդ և Ղարաբաղում հեղինակություն վայելող կուսակցությունն էր: Ուներ «Ապառաժ» անունով պաշտոնաթերթ: Քաղաքում գտնվող նրանց ակումբում տեղի էին ունենում ժողովներ, հավաքույթներ, ներկայացումներ: Ակումբում կարելի էր ծանոթանալ «Ապառաժին» և դրսից ստացվող թերթերին: Տեղերում՝ խոշոր բնակավայրերում, կուսակցությունն ուներ իր կազմակերպությունները, որոնք կոչվում էին «Հողային կոմիտեներ»[5]:

Կուսակցությունների փոխհարաբերությունները Ղարաբաղում, Շուշիում եղել են բարեկամական, ընկերական: «Այն ժամանակ,- գրում է Ա. Կիսիբեկյանը,- ոչ մի կուսակցություն ոչ մի արգելք չէր հարուցում որևէ կուսակցության դեմ՝ նրան զրկելու աշխատելու հնարավորությունից»[6]:

Այս քաղաքական ուժերն էին գործում Ղարաբաղի նոր վարչության՝ գործադիր կոմիտեի կազմում: Գործադիր կոմիտեն ուներ չորս հանձնաժողով՝ վարչական, կազմակերպչական, պարենային, պրոպագանդի: Հանձնաժողովների ղեկավարները կոմիսարներն էին: Գործադիր կոմիտեի իրավասությունը տարածվում էր ողջ Ղարաբաղի և Զանգեզուրի վրա:

Շուշիում 1917 թ. մարտի կեսերին, գործադիր կոմիտեներին կից կենտրոնի նմանողությամբ, կազմավորվեցին բանվորների, զինվորների, գյուղացիական սովետներ, որոնք հետագայում միավորվեցին մեկ՝ Շուշիի սովետի կազմում: Այն էական դեր չխաղաց քաղաքի կյանքում գլխավորապես այն պատճառով, որ բազմազգ էր ու բազմակուսակցական, աչքի էր ընկնում միասնական գաղափարի ու նպատակի անորոշությամբ, պայքարի եղանակների տարընմբռնումներով: Ի վերջո, Շուշիի սովետը դարձավ գործադիր կոմիտեի կցորդը[7]: Հատկանշական է, որ 1917 թ. ընտրությունների ընթացքում, որը տեղի ունեցավ կուսակցական սկզբունքով, Շուշիի խորհրդի կազմում ընտրվեցին 30 կադետ, 24 դաշնակցական, 1 մենշևիկ և 1 անկուսակցական[8]: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Շուշիի սովետը կոչ էր անում պաշտպանել անդրկովկասյան նորաստեղծ

---

[4] Հայ պարբերական մամուլի համահավաք ցուցակ, Ե., 1976, էջ 111:

[5] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 41-42:

[6] Նույն տեղում, գ. 111, թ. 6 (տե՛ս նաև **Հարությունյան Հ.,** Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Ե., 1996, էջ 17):

[7] **Հովհաննիսյան Ա.,** Սովետական իշխանությունների հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Ե., 1971, էջ 40-41:

[8] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 43:

իշխանությունը: Սովետի դերի վերաբերյալ ճիշտ է այն տեսակետը, որ հեղափոխությանը ծառայելու փոխարեն ծառայում էր հակահեղափոխությանը[9]:

Այսպիսին էին հասարակական իրադրությունը, իշխանական ու կուսակցական մարմինների փոխհարաբերությունը Ղարաբաղում մինչև 1917 թ. նոյեմբեր:

Իշխանությունը, առավել ևս կուսակցական ուժերը ի զորու չեղան հենց սկզբից՝ փետրվարյան հեղափոխությունից հետո, երկրամասում արդեն ծայր առած՝ տնտեսության, հասարակական կյանքի կազմալուծումն ու քայքայումը կասեցնելու, որն առկա էր երկարատև պատերազմի և կենտրոնական իշխանության անընդունակության պատճառով: Թեև պատերազմում Թուրքիայի պարտությունն ակնհայտ էր, բայց նրա հակահայկական գործունեությունն օրեցօր ընդլայնվում և վտանգավոր էր դառնում: Հատկապես Անդրկովկասի արևելքում, որտեղ հայ և թուրք բնակչությունը ապրում էր անմիջական հարևանությամբ: Սովն արդեն գլուխ էր բարձրացրել, որի պատճառը հիմնականում ճանապարհների անապահովությունն էր: Երկրամասի բնակչությունը տառապում էր անիշխանության ու անպատժելիության ճիրաններում:

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Ռուսաստանում հեղաշրջման հետևանքով բոլշևիկները իշխանության գլուխ անցան, իսկ 1918 թ. հունվարի 8-ին նրանք ուժով ցրեցին դեմոկրատական սկզբունքով ընտրված Սահմանադիր ժողովը: Ողջ կայսրության մեջ լուծարվեցին Ժամանակավոր կառավարության բոլոր հաստատությունները: 1917 թ. հոկտեմբերի 27-ին Անդրկովկասը, որ իրավականորեն դեռ իրեն Ռուսաստանի մասն էր համարում, ստեղծեց տեղական ինքնակառավարման օրենսդիր ու գործադիր մարմինները՝ Սեյմը և Կոմիսարիատը, որի բաժինների ղեկավարները, ինչպես նաև տեղական վարչությունների ղեկավարները կոմիսարներն էին: Սեյմի ընտրությունները տեղի ունեցան ազգային-կուսակցական սկզբունքով: Անդրկովկասի հայությունը ներկայացնում էր դաշնակցությունը, որն ուներ 27 պատգամավոր: Համեմատելու համար նշենք, որ սոցիալ-դեմոկրատները, որոնք ներկայացնում էին վրաց բնակչությունը, ունեին 36 պատգամավոր, այդ թվում՝ 4 հայ[10]:

Ղարաբաղում 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անիշխանությունը հասավ իր գագաթնակետին: Շուշիում ջանքեր էին գործադրվում հայ և թուրք բնակչության միջև հաշտ մթնոլորտի պահպանության ուղղությամբ, փորձում էին վերացնել արդեն իրողություն դարձած շրջափակումը, սակայն այդ ջանքերը արդյունավետ չէին, իսկ գործադիր կոմիտեն մատնված էր անգործության: Այս իրավիճակում հայ հասարակության ներկայացուցիչներն առաջարկում են լուծարել գործադիր կոմիտեն և ստեղծել ինքնակառավարման նոր մարմին: 1917 թ. նոյեմբերի վերջերին կոմիտեն լուծարվում է, և ստեղծվում է հայերից ու թուրքերից բաղկացած խառը հանձնաժողով՝ գավառային կոմիսար Լ. Վար-

---

[9] **Հովհաննիսյան Ա.,** նշվ.աշխ., էջ 42:

[10] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 36, 57:

դապետյանի նախագահությամբ[11]: Այս հանձնաժողովը ևս զուտ անվանական նշանակություն էր ունենալու:

Նման պայմաններում հայ քաղաքական հոսանքների ներկայացուցիչները Լ. Վարդապետյանի տանը մանրամասն քննարկումներից ու խորհրդակցություններից հետո ստեղծում են մի հանձնաժողով՝ Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ, հետագայում կրճատ՝ Միջկուսակցական բյուրո, իսկ ավելի ուշ՝ Կոմիսարների խորհուրդ: Միջկուսակցական բյուրոյի կազմում ընտրվում են 5 դաշնակցական, 3 մենշևիկ, 3 էսէռ, 3 բոլշևիկ: Նախագահ է ընտրվում դաշնակցական Հայրապետ Մուսայելյանը[12]:

Միջկուսակցական խորհուրդն ընդունեց ծրագիր, որով պետք է առաջնորդվեր իր գործունեության ընթացքում.

«ա. Ամեն գնով պաշտպանել հայ և թուրք ժողովուրդների համերաշխությունը:

բ. Վերջ դնել քաղաքում և շրջաններում գլուխ բարձրացրած անարխիային:

գ. Սերտ կապ ստեղծել քաղաքի ադրբեջանական մասի ղեկավարության հետ երկու ժողովուրդների միջև ծագած վեճերը լուծելու հայ և թուրք ներկայացուցիչներից բաղկացած միջազգային կոմիտեի միջոցով. թույլ չտալ հայ և ադրբեջանցի ժողովուրդներին պրովոկացիայի ենթարկելու»[13]:

Քաղաքում և շրջաններում անարխիային վերջ դնելու նպատակով կազմվեց ռազմական դատարան[14]: Բյուրոն քաջ գիտակցում էր երկրամասի ինքնապաշտպանության կարևորությունը և հնարավորինս զինում էր բնակչությանը, ընդհանրապես նախապատրաստական աշխատանքներ էր կատարում այդ ուղղությամբ, որը ղեկավարում էր Բյուրոյի ռազմական գործերի կոմիսար Հ. Թումյանը[15]:

Այդ օրերին՝ 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, հայկական կորպուսի նորանշանակ հրամանատար զորավար Թ. Նազարբեկյանը Թիֆլիսում կազմավորում է առանձին՝ Ղարաբաղյան անունով մի ջոկատ, փոխգնդապետ Շահնազարովի հրամանատարությամբ: Դա, մեր կարծիքով, ապագա հայտնի Շուշիի գունդն է, որի հրամանատարն էր Մ. Մելիք-Շահնազարյանը:

Շուշիում այդ ժամանակամիջոցում գործում էր նաև թուրք բնակչության կողմից ստեղծված Մուսուլմանական ազգային խորհուրդը: Երկրամասում կարգուկանոն հաստատելու ուղղությամբ ջանքերը միավորելու, առկա նյութական միջոցներն արդյունավետ գործադրելու, ազգային խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Միջկուսակցական խորհուրդն ու Մուսուլմանական ազգային խորհուրդը հանգամանալից քննարկումներից հետո ստեղծեցին 13 հոգուց բաղկացած Ազգամիջյան խորհուրդ անունով մի մարմին, որի անդամներից 6-ը հայ էին և 6-ը՝ մահմեդական, նախագահը չեզոք էր, Շուշիի դատավոր, ազգու-

---

[11] **Հարությունյան Հ.,** նշվ.աշխ., էջ 14-15:
[12] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 48-49:
[13] Նույն տեղում, թ. 49:
[14] Նույն տեղում:
[15] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարը, Ե., 1994, էջ 22-23:

թյամբ վրացի Իոսիֆ Կորիևը[16]: Կոմիտեի հրահանգով ինքնակառավարման մարմիններ ստեղծվեցին նաև տեղերում, կազմվեց դատարան, նշանակվեցին զինվորական լիազորներ: Սակայն երկրամասում դեպքերը զարգանում էին արագ թափով: «Շուշիում գործող Միջկուսակցական բյուրոյից, թուրքերի Ազգային կոմիտեից ու Միջազգային կոմիտեից և ոչ մեկը չդարձավ ընդհանուր ճանաչում և հեղինակություն վայելող իսկական կենտրոնական իշխանություն»,- իրավացիորեն գրում է հետազոտողը: Միջկուսակցական բյուրոն դադարեց գործելուց 1918 թ. հուլիսի 16-ին[17]:

Միջկուսակցական բյուրոն ստեղծելու պահին նախատեսված էր, որ այն պետք է գործի ժամանակավոր, իսկ երբ «հանգամանքները թույլ կտային, հետագայում հրավիրել ժողովրդական համագումար և նրա ընտրությամբ կազմել օրինական կառավարություն»[18]: Դա տեղի ունեցավ 1918 թ. հունիս-հուլիս ամիսներին: 1918 թ. գարնանից թուրքական բանակը, տեղական թուրք ավազակախմբերի հետ մահ ու ավեր սփռելով շուրջը, շարժվում էր դեպի նավթառատ, Մեծ Թուրան տանող ճանապարհին կանգնած Բաքու: Մայիսի վերջերին իրենց անկախությունն էին հռչակել Վրաստանը, Հայաստանը, իսկ Արևելյան Անդրկովկասի թուրքերը ստեղծեցին իրենց պետությունը՝ Ադրբեջան անունով: Ղարաբաղի շուրջը օղակը սեղմվում էր, հայության գլխին ֆիզիկական ոչնչացման սպառնալիք էր կախված: Հայաստանի անկախ հանրապետության՝ Բաթումում 1918 թ. հունիսի 4 -ին կնքած պայմանագիրը Թուրքիայի հետ, Ղարաբաղի հայությանը հարկադրեց ապավինել սեփական ուժերին, դիմել վճռական քայլերի:

Շրջանառվել է այն կարծիքը, թե Հայաստանի Առաջին հանրապետությունը անտեսել է, ոչինչ չի արել Ղարաբաղը մայր Հայրենիքից անջատելու դեմ: Հունիսի 4 -ի պայմանագրով անկախ Հայաստանին բաժին էր տրվում 12 հազար քառ. կմ տարածք: Այդ տարածքում չկային Հայաստանի բնիկ մի շարք գավառները, չկար նաև Ղարաբաղը: Այդ կապակցությամբ չենք կարող համաձայնվել մեծանուն պատմաբան Լեոյի հետ, որը գրում է, թե Բաթումի հայ-թուրքական պայմանագիրը ստորագրող հայ պատվիրակները (Ա. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան) «ոչինչ հասկացողություն չունեին ո՛չ Ղարաբաղի, ո՛չ էլ Զանգեզուրի մասին»[19]: Այս տեսակետը պաշտպանում է նաև Բ. Ուլուբաբյանը[20]: Հայաստանի Առաջին հանրապետությունը ստեղծվեց ներքին և արտաքին ծանրագույն պայմաններում, սակայն Ղարաբաղի, Զանգեզուրի ճակատագիրը մշտապես մնաց Հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում, նրանց հոգածության առարկան: Հայաստանի ազգային

---

[16] **Հարությունյան Հ.,** նշվ. աշխ., էջ 19-21:
[17] Նույն տեղում, էջ 23:
[18] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 22:
[19] **Լեո,** Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 425:
[20] **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 203:

արխիվում պահպանվող բազմաթիվ վավերագրեր, որոնց մեծ մասն այժմ տպագրված է, հաստատում են մեր ասածը[21], և որի 28.01.1918 թվակիր N 1 վավերագիրը վերաբերում է Ղարաբաղի պաշտպանությանն ու Շուշիի գնդի կազմավորմանը և զինելուն[22]: Առաջին հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց Ղարաբաղը հանրապետության վարչատարածքային Սյունիք նահանգի կազմում ընդգրկելու, հաստատեց համապատասխան նախահաշիվ՝ բացելով ֆինանսավորում[23]: Վերջերս պրոֆ. Վ. Ղազախեցյանը հրապարակեց «Հայաստանի հանրապետության իշխանությունը Լեռնային Ղարաբաղում և Զանգեզուրում» խորագրով վավերագրերի մի հավաքածո[24]:

Ղարաբաղի պատկանելության խնդիրը քննարկման առարկա է դարձել Բաթումի պայմանագրի ստորագրելուց անմիջապես հետո և շարունակվում է ցարդ: Այլ բան է, որ արդյունքը չի արդարացրել հայ ժողովրդի գործադրած ջանքերը:

Միջկուսակցական բյուրոն տեղերում և Շուշիում նախապատրաստում է Ղարաբաղի հայոց համագումարի հրավիրումը: 1918 թ. հուլիսի 22 -ին Շուշիում, Թեմական դպրոցի շենքում բացվում է Ղարաբաղի հայոց առաջին համագումարը, որն իր աշխատանքները շարունակեց մինչև հուլիսի 26 -ը[25]: Համագումարին մասնակցում է 180 պատգամավոր՝ երկրամասի բոլոր հայկական գյուղերից, Շուշվա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարում լսվում է Ղարաբաղի ժամանակավոր կառավարության՝ Կոմիսարների խորհրդի հաշվետվությունը: Համագումարը միաձայն արտահայտում է Ղարաբաղի հայության կամքը իր հայրենիքի քաղաքական կարգավիճակի վերաբերյալ. «Ազատ Ղարաբաղ ազատ Ռուսաստանի սահմաններում»[26]: Հռչակելով երկրամասի՝ ինքնուրույն ու ազատ պետական կազմավորում լինելու իրողությունը, համագումարը ձեռնամուխ է լինում օրենսդիր ու գործադիր մարմինների ընտրության, կառավարության կառուցվածքի, կազմի հաստատմանը:

Ղարաբաղի օրենսդիր մարմինը համարվում է համագումարը: Գործադիրը՝ 8 բաժնից բաղկացած կառավարությունը, իրագործելու էր համագումարի որոշումները՝ մինչև հաջորդ համագումարն ընկած ժամանակահատվածում: Կառավարության անդամներից 4 -ը դաշնակցական էին, 2 –ը՝ մենշևիկ՝ 1 -ը էսէռ և 1 –ը՝ անկուսակցական[27]: Կառավարությունը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն, կառավարության անդամները՝ կառավարիչներ: Կառավարության կառուցվածքն ու կազմը հետևյալ տեսքն ունեին.

---

[21] *Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, отв. ред. Микаелян В. А., Е., 1992.*

[22] Նույն տեղում, *док. N 1, с. 1.*

[23] Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Ե., 1998, էջ 313, վավ. N 716, **Газиян А., Каграманян К.,** *Требуются новые подходы (Голос Армении, 28.V.2002).*

[24] Բանբեր Հայաստանի արխիվների, 2003, N 1, էջ 46 - 50:

[25] *Нагорный Карабах в 1918-1923 гг., док. N 3, с. 3.*

[26] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 50-53, **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարը, էջ 25 և այլն:

[27] Նույն տեղում, թ. 58:

«1. Ներքին գործերի կառավարիչ Եղիշե Իշխանյան
2. Արտաքին գործերի կառավարիչ Եղիշե Իշխանյան
3. Զինվորական գործերի կառավարիչ Հարություն Թումանյան
4. Հաղորդակցության գործերի կառավարիչ Մարտիրոս Այվազյան
5. Պարենավորման գործերի կառավարիչ Արսո Հովհաննիսյան
6. Ֆինանսական գործերի կառավարիչ Մովսես Տեր-Աստվածատրյան
7. Հողային գործերի կառավարիչ Արշավիր Քամալյան
8. Արդարադատության գործերի կառավարիչ Արշավիր Քամալյան

Կառավարության նախագահ ընտրվեց Եղիշե Իշխանյանը, իսկ քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը»[28]:

Նախատեսվում էր ստեղծել երկու հանձնաժողով՝ բժշկասանիտարական և կրթական-ուսումնական[29], սակայն կառավարության հուլիսի 29-ի որոշմամբ ստեղծվեց չորսը՝ ֆինանսական, պարենավորման, բժշկասանիտարական և վարչաիրավական[30]: Կառավարությունն ընտրեց երեք հոգուց բաղկացած խմբագրական հանձնաժողով: «Ղարաբաղի սուրհանդակ» պաշտոնաթերթի միակ համարը լույս տեսավ 1918 թ. օգոստոսի 19-ին, որտեղ հրապարակվեց Ժողովրդական կառավարության հայտարարագիրը (դեկլարացիան)[31]: Հայտարարագրում ներկայացված է Ազատ Ղարաբաղի Ժողովրդական կառավարության հետագա գործունեության ծրագիրը[32]: Հուշագիր Ա. Կիսիբեկյանը համառոտ հաղորդում է ծրագրի էությունը. «Պայքարել անիշխանության ու ճնշումների դեմ, չեզոքացնել հանցագործ տարրերին, արդարացի լուծել վիճելի խնդիրները, վերացնել ինքնադատաստան գործողությունները, բեկական բռնագրավված հողերը կարգավորել, աշխատել պարենավորման գործը կազմակերպել ու հայ և թուրք ժողովուրդների մեջ համերաշխություն հաստատել»[33]:

Ահա այս խնդիրներն էին ծառացած Ղարաբաղի հայության առաջ, որոնք անհապաղ լուծում էին պահանջում, և որին ձեռնարկեց Ազատ Ղարաբաղի Ժողովրդական կառավարությունը: Հավելենք, որ հայտարարագիրն ամբողջովին տոգորված էր իր ժամանակաշրջանին բնորոշ հեղափոխականությամբ, և, չնայած դրան, առաջադրված խնդիրները որոշակի էին:

Ժողովրդական կառավարությանը հաջողվեց որոշ կարգուկանոն մտցնել երկրամասում: Առաջնահերթ խնդիրը ժողովրդի ֆիզիկական ապահովությունն էր: Շուշիում և շրջակա բնակավայրում մտցվեց պարետային ժամ, պարետ նշանակվեց կապիտան Արտաշես Վարդապետյանը: Գավառներում նշանակվեցին գավառային ու գյուղական կոմիսարներ, կազմակերպվեցին ինքնապաշտպանության ջոկատներ, գաղտնի արհեստանոցներում վերանորոգվում էին հին զենքերը, նաև պատրաստվում էին

---

[28] Նույն տեղում, թ. 52, **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը…, էջ 205:
[29] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 52:
[30] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 52, **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը…, էջ 205:
[31] **Հարությունյան Հ.,** նշվ. աշխ., էջ 26:
[32] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 52-53:
[33] Նույն տեղում, թ. *55-59, Нагорный Карабах, док. N 8, с. 13* և այլն:

նորերը, տեղերում հիմնվեցին հաշտարար դատարաններ, իսկ Շուշիում՝ շրջանային դատարան և հատուկ գործերի քննիչ հանձնաժողով, գյուղական հասարակություններում փորձեցին կարգավորել հողաբաժան վեճի ու կոնֆլիկտների պատճառ դարձած խնդիրները և այլն:

Ժողովրդական կառավարության իրավասությունը տարածվում էր ողջ հայկական Ղարաբաղի, այդ թվում՝ Գանձակի գավառի զուտ հայաբնակ գյուղերի վրա:

Ամփոփելով 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. օգոստոս ընկած ժամանակաշրջանում Ղարաբաղի քաղաքական պատմությունը՝ հաստատապես կարող ենք ասել, որ երկրամասը, իբրև ինքնուրույն պետական կազմավորում, սկիզբ առավ Հայ հեղափոխական կուսակցությունների՝ Ղարաբաղի ժամանակավոր խորհրդի՝ Կոմիսարների խորհրդի գործունեությամբ, ամբողջացավ ու ավարտուն բնույթ ստացավ Ղարաբաղի Ժողովրդական կառավարության ընտրությամբ ու գործունեությամբ[34]: Մի ուշագրավ հանգամանք ևս. Ղարաբաղը Ռուսաստանից անջատվելուն կտրականապես դեմ արտահայտվեց, չնայած նույն օրերին Թիֆլիսում այդ գաղափարը հետզհետե դառնում էր տիրապետող:

КАРАБАХ ПОСЛЕ ФЕВРАЛЬСКОЙ БУРЖУАЗНО-ДЕМОКРАТИЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ

(март 1917 г. – август 1918 г.)

АБРАМЯН Л. Э.

Резюме

В постреволюционный период в крае царили анархия, блокада, голод. Антиармянская деятельность турецких эмиссаров, разбойничьи нападения местных банд создали угрозу физическому существованию армянства Карабаха. Совместные попытки представителей армянской и мусульманских общественных организаций оказались безуспешными. В этой критической ситуации армяне Карабаха создали органы местного самоуправления. 22 июля 1918 г. первый съезд армян Карабаха провозгласил край свободным государственным образованием в составе демократической России, избрав органы законодательной и исполнительной власти – Народное правительство.

[34] ***Հարությունյան Հ.***, նշվ. աշխ., էջ 28: